ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՀԱՅԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՅԿԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմեց Հայկաձոր համայնքի ղեկավար՝ ***Սերյան Սմբատյանը***

Հաստատված է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկաձոր գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 15-Ն որոշմամբ:

Բովանդակություն

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

1. Ներածություն……

2. ՀԶԾ կառուցվածքը……

2.1. Համայնքի իրավիճակի նկարագրություն……

2.1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն……

2.1.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ……

2.1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ……

2.1.4.Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում……

2.1.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոնները……

2.1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն……

2.2. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում……

2.2.1. Համայնքի հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում……

2.2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում……

2.2.3. ՀԶԾ հեռահար նպատակը (տեսլականը) և անմիջական նպատակներն ապահովող ծրագրերի նկարագրություն……

2.3. ՀԶԾ ֆինանսավորում……

3. ՀԶԾ մոնիթորինգ……

4. ՀԶԾ իրականացումը……

5. ՀԶԾ գնահատում……

6. Վերջաբան……

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հայկաձոր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի կարևորագույն փաստաթուղթն է, որի առաջնային նպատակն է բազմակողմանի ու հանգամանալից քննարկումների արդյունքում վեր հանված համայնքային խնդիրներին տալ լուծումներ՝ դրանով իսկ բարելավել համայնքում կյանքի որակը: Այն առաջին հերթին ուղղված է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի, համայնքային ծառայությունների որակի բարելավմանը: Ծառայությունները բազմաբնույթ են և դրանց որակական փոփոխության համար անհրաժեշտ է շարունակել մեր հետևողական աշխատանքը, բազմապատկելով ջանքերը և եռանդը: Մեծապես կարևորում եմ մասնակցային գործընթացները համայնքային հիմնախնդիրների վերհանման և քննարկման ժամանակ: Այն հիմնախնդիրները, որոնք արդեն իսկ քննարկվել են տարբեր խմբերում, հիմք են հանդիսացել 2017-21թթ. հնգամյա զարգացման ծրագրի մշակման համար, կարևորվել են դրանց առաջնահերթությունները, գնահատվել են առկա հնարավորությունները: Միաժամանակ պետք է նշեմ, որ ծրագիրը պետք է լինի ճկուն, պարբերաբար վերանայվի և լրամշակվի: Դա ենթադրում է ծրագրի իրականացման ամենատարբեր փուլերում մոնիթորինգի իրականացում, որը կպատասխանաի մի շարք հարցերի, թե արդյոք ծրագրի իրականացումը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա ինչ նշանակալի ազդեցություն է ունենալու: Զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս: Ելնելով ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

Համայնքի խնդիրների լուծումը հնարավոր է միայն համատեղելով պետության, միջազգային կազմակերպությունների և համայնքի հնարավորությունները:

Հարգելի համագյուղացիներ, միայն բոլորիս շահագրգիռ և սրտացավ մոտեցմամբ է հնարավոր լուծել համայնքի խնդիրները: Յուրաքանչյուրիցս է կախված, թե ինչպիսի համայնք կունենանք 5 տարի անց: Վստահ եմ, որ համատեղ աշխատանքի դեպքում մեր հաջողությունը ապահովված է:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Հայկաձոր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցվել է Սահմանադրությանը և ուժի մեջ կմտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Հայկաձոր համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶԾ-ի մշակմանը մասնակից աշխատանքային խմբերի կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝

գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: ՀԶԾ-ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն ներկայացնում է Հայկաձոր համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶԾ-ն ներառում է նաև Հայկաձոր համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Հայկաձոր համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Հայկաձորի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶԾ-ն մշակելիս համեմատական է անցկացվել նաև համայնքի 2013-2016 թվականների քառամյա զարգացման ծրագրի հետ, քանի որ հնարավոր է համայնքի զարգացման նախորդ ծրագրում եղած լինեն ծրագրային դրույթներ, որոնք այսօր ևս արդիական են և դրանց ներառումն ու շարունակությունը սույն ծրագրում հրամայական է: ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական

հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀԶԾ-ի հիմնական նպատակները, ծրագրում ներառված նպատակների իրագործման համար անհրաժեշտ ներդրումների ուղղությունները:

ՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են, որ իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Մոնիթորինգն, առաջին հերթին, անհրաժեշտ է համայնքի ղեկավարությունը, որպեսզի հնարավոր լինի ձեռքը պահել ծրագրի «զարկերակի» վրա:

ՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է ծրագրերի իրականացումն ըստ ժամկետների, ֆինանսավորման և կատարման պատասխանատուների:

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ծրագրերն են, որոնց իրականացման համար դրանց բյուջեներով կամ նախահաշիվներով հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր:

ՀԶԾ-ի 5-րդ բաժնում ՀԶԾ իրականացումը պետք է գնահատվի: Գնահատումն ավարտված կամ իրականացվող ծրագրի իրականացման և արդյունքների պարբերական և օբյեկտիվ ուսումնասիրություն է: Իրականացված կամ իրականացման փուլում գտնվող ծրագրերի արդյունավետության և ծախսարդյունավետության գնահատման միջոցով փորձ է արվում պատասխանել երեք հիմնական հարցի՝

- Ինչպե՞ս է ծրագիրն իրականացվել կամ իրականացվում,
- Ի՞նչ ազդեցություն է այն ապահովել,
- Արդյո՞ք ստացված արդյունքներն արդարացնում են այն ծախսերը, որոնք իրականացվել են արդյունքներն ապահովելու համար:

Սակայն, անհրաժեշտ է մոնիթորինգը հստակորեն տաբերակել գնահատումից: Մոնիթորինգը նկարագրական բնույթ ունի: Այն տեղեկություններ է տրամադրում, թե ժամանակի տվյալ պահին ծրագիրը որտեղ է գտնվում՝ համեմատած թիրախների հետ: Գնահատումը կենտրոնանում է պատճառահետևանքային կապերի և արդյունքների վրա և, ի տարբերություն նկարագրական մոնիթորինգի, վերլուծական բնույթ ունի: Գնահատման միջոցով փորձ է արվում հասկանալ մոնիթորինգի միջոցով բացահայտված շեղումները, ուսումնասիրել ձախողման կամ հաջողության պատճառները, բացահայտել գրանցված արդյունքների որ մասն է կարելի վերագրել ծրագրին, իսկ որ մասը՝ այլ գործոններին, ինչպես նաև ծրագրի իրականացման առավել արդյունավետ այլընտրանքային լուծումներ առաջարկել և հետագայում, սխալները չկրկնելու համար, դասեր քաղել:

2.1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Հայկաձոր համայնքը Շիրակի մարզի դարերի պատմություն ունեցող համայնքներից է, որը նախկինում կոչվել է Կարմիր վանք, Կզըլքիլիսա Մեծ, Ղզըլքիլիսա, Ղոշավանք, Ղոշավանք Նոր, Ղուշավանք: Հայկաձոր է վերանվանվել 1950 թ-ին: Տեղադրված է Գյումրի-Երևան ավտոմայրուղու ձախ կողմում: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում, մարզկենտրոնից 37 կմ հարավ-արևմուտք, Ախուրյան գետի ձախ կողմում:

Գյուղը ունի 1010 տարվա պատմություն, Անի քաղաքաի շրջակա գյուղերից է, և Անի քաղաքի միջնաբերդից հեռավորությունը մոտ 3կմ է, այդ իսկ պատճառով էլ համարվել է Անիի արվարձաններից: Հին գյուղը՝ Ղոշովանքը անմիջապես կառուցվել է Ախուրյան գետի աջ ափին 5-6-րդ դարերում, այնուհետև 8-րդ դարում տեղափոխվել է Ախուրյան գետի ձախ ափ:

Ղոշովանք անունը ծագել է Հոռոմոսի վանք անվանումից, որը թուրքերն անվանել ենՂոշավանք: Այն ունեցել է երկու միացյալ գմբեթներ: Մինչև այսօր էլ հին գյուղում կան կիսաքանդ տներ, որոնց հեռավորությունը գետափից կազմում է ամենաշատը 80մ: Ձորում մինչ օրս պահպանվել են քարանձավային բնակատեղիներ:

1940 թվականից գյուղը տեղափոխվել է դեպի արևելք և վերանվանվել Հայկաձոր: Գյուղը կից է ձորերին և պատմականորեն կապված է Հայկ նահապետի անվան հետ և դրա համար էլ կոչվել է Հայկաձոր: Տարածքի պատմական հուշարձաններից է համարվում Սուրբ Գրիգոր լուսավորիչ եկեղեցին, որը պահպանվել է մինչ օրս: Այն կառուցվել է Սարգիս եպիսկոպոսի կողմից 985 թվականին և վերանորոգվել 13-րդ դարում: Եկեղեցին հիշատակվում է նաև իբրև վանք:

Գյուղն ունեցել է ջրաղաց և ձիթհան, որոնք սպասարկել են շրջակա գյուղերի բնակիչներին:

Հայկաձորը տարբեր կողմերից սահմանակցում է Շիրակի մարզի Ջրափի և Բագրավան համայնքներին, Արագածոտնի մարզի Փոքր Արթիկ համայնքին, իսկ արևմուտքից սահմանակցում է Թուրքիային, որից հետ սահմանն անցնում է Ախուրյան գետով:

Ծովի մակերևույթից գյուղի բարձրությունը 1444մ է, տարեկան միջին ջերմաստիճանը -30^0 C է, իսկ տարեկան բարձրը կազմում է +30^{0}C: Տարեկան միջին տեղումների քանակը կազմում է 460մմ:

Գյուղի նախնիների մի մասը 1829-1830 թվականներին գաղթել են Մուշի, Բասենի, Մանազկերտի և Բուլանըխի շրջաններից: Այնուհետև համայնքում բնակություն են հաստատել նաև 1915 թվականի Եղեռնից մազապուրծ եղածներ Ղարսի նահանգի Արազգեղ գյուղից, Մուշ և Տարոն գավառներից: Հնում այստեղ բնակվել են նաև հույներ:

1900-ական թվականների սկզբներին թուրքական հարձակումներից անմասն չի մնացել նաև Հայկաձորը, որը չնայած իրեն բաժին հասած արհավիրքներին, կարողացել է ապաստան տալ թուրքական յաթաղանից փրկված ավելի քան 100 արևմտահայ ընտանիքների, որոնց սերունդներից շատերը ներկայումս բնակվում են գյուղում:

1887 թվականից Հայկաձորը գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին գյուղում հաստատվել են խորհրդային կարգեր և մինչև 1996 թվականը ընդգրկված է եղել Անիի շրջանի կազմում: 1996 թվականին Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումից հետո Հայկաձորը, որպես վարչական առանձին միավոր (ինքնուրույն համայնք), ընդգրկված է ՀՀ Շիրակի մարզում:

Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում է անասնապահությունը, հացահատիկային և կերային մշակաբույսերի մշակությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են թռչնաբուժությամբ և մեղվապահությամբ:

Բնակավայրն իր զարգացումն հիմնականում ապրել է հետպատերազմյան տարիներին, երբ կառուցվել է միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, բուժկետ, խանութ, բաղնիք, կենցաղի տուն, բնակելի տներ, անասնապահական և գյուղատնտեսական նշանակության տասնյակ կառույցներ:

Հայկաձորը ամենատարբեր ժամանակներում աչքի է ընկել հատկապես հացահատիկի և մսի արտադրության բարձր ցուցանիշներով:

1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո, հաշվի առնելով բնակավայրի բնակելի տներին հասցված վնասները, ինչպես նաև բնակավայրը սահմանային

գոտուց դուրս հանելու նպատակահարմարությունը, խորհրդային իշխանությունների կողմից որոշում կայացվեց բնակավայրը տեղափոխել 3կմ դեպի արևելք՝ Գյումրի-Արմավիր հանրապետական նշանակության ճանապարհի աջ կողմի հարթ տարածք: Աղետի գոտու վերականգնողական աշխատանքներին ներգրավված ղազախական շինարարական ջոկատների կողմից 1989 թվականին սկսվեց նոր Հայկաձորի շինարարությունը, սակայն այն մնաց անավարտ, և հետագա 20 տարիների ընթացքում այդ անավարտ շենքերն ու շինությունները քայքայվեցին, թալանվեցին և ներկայումս տարածքը նմանվում է ավերակների:

Համայնքը բոլոր ժամանակներում տվել է անվանի այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպիսիք են

- Հայկական ՍՍՀ մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Պողոսովը
- Լենինի շքանշանակիր Արշալույս Ղանդիլյանը
- Անի թերթի խմբագիր Լենվել Մելիքյանը
- Բանաստեղծ Զավեն Կասյանը և այլոք:

Հայկաձորի բնակչությունը ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես հայրենական մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան պատերազմին: Առաջինի ժամանակ գյուղը տվել է 123 զոհ, որոնց անմար հիշատակի համար գյուղի հարավային մասում 1976 թվականին կանգնեցվել է հուշարձան-կոթող:

Արցախյան ազատամարտի մասնակիցներ են համայնքի 17 ազատամարտիկներ:

2.1.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Գյուղը ունի կտրված ռելիեֆ, կլիման խիստ ցամաքային է: Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը, որոնք մշտապես գտնվում են կարկտահարության ու երաշտի վտանգի տակ: Որպես խմելու ջուր համայնքում օգտագործվում են արտեզյան հորերի ջրերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 3019 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 2800 հա, այդ թվում 1254 հա վարելահող, 1459.5 հա

արոտավայր և 87 հա այլ հողատեսքեր: Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 36 հա:

Նախկին շրջկենտրոնից բնակավայրի հեռավորությունը 42 կմ է, մարզկենտրոնից՝ 37կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 114կմ:

Ըստ վիճակագրական տվյալների 1831 թվականին գյուղն ունեցել է 152, 1897-ին՝ 1052, 1926-ի՝ 840, 1939-ին՝ 856, 1979-ին 413, 1986-ին մոտ 625 բնակիչ:

Վերջին 20 և ավելի տարիներին համայնքի բնակչության թվաքանակը նվազել է շուրջ 150 մարդով, բացի այդ համայնքում տվյալ ժամանակահատվածին բնորոշող ժողովրդագրական բնութագրիչներից է այն, որ տեղի է ունեցել համայնքի բնակչության ծերացում, այսինքն 63 և ավելի տարիքային խմբին պատկանող մարդկանց թիվը աճել է, ինչը տեղի է ունեցել ի հաշիվ այն բանի, որ կիսով չափ նվազել է դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների թիվը:

Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 20-30 տոկոսը մեկնում է արտագնա աշխատանքի, ինչն է պատճառ է դառնում մեծամասամբ համայնքից երիտասարդ ընտանիքների արտագաղթին:

Մինչև 1990 թվականը համայնքի աշխատունակ բնակչության 20 տոկոսը զբաղվածություն է ունեցել Անիպեմզա կոմբինատում, Անի կայարանի <<Անիտուֆ>> ձեռնարկությունում, կերամիկական իրերի արտադրամասում և <<Ստրոմաշինա>> գործարանի Անի կայարանի մասնաճյուղում:

Համայնքում առկա են տուֆ քարի մեծ պաշարներ: Անհրաժեշտ ներդրումներ կատարելու դեպքում տուֆ քարի արտադրությունը և վերամշակումը կարող է զարգանալ և զբաղվածություն ապահովել ինչպես Հայկաձորի, այնպես էլ հարևան համայնքների աշխատունակ բնակչության համար: Համայնքում, ոռոգման ցանցի անցկացմանը զուգահեռ կարելի է զարկ տալ այնպիսի ճյուղերի զարգացմանը, ինչպիսիք են գյուղատնտեսական և բանջարաբոստանային մթերքների վերամշակումը:

Սոցիալական ոլորտը կարելի է ասել ոչ մի առանձնահատուկ դրսևորում չունի Հայկաձորում, եթե չհաշվենք, որ համայնքում 2002 թվականին Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ կառուցվել է դպրոց:

Համայնքը չունի համայնքային կենտրոն կամ մշակույթի տուն: Չկան նաև ժամանցի գոտիներ կամ այլ հարմարություններ, որտեղ հնարավոր կլինի

կազմակերպել համայնքի բնակչության հանգիստն ու ազատ ժամանցը, երեխաների մշակութային և գեղագիտական դաստիարակությունը:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Աղինի առողջության կենտրոնի, Մարալիկի առողջության կենտրոնի և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով: Բուժ.մանկաբարձական կետը մասնակի նորոգվել է 2005 թվականին Հայաստանում ԱՄՆ դեսպանատան <<ՆՈՎԱ>> ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ:

Համայնքում չկա մանկապարտեզ, և համայնքի մինչև 6 տարեկան երեխաները զրկված են նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից:

Համայնքի բնակիչների ձգտումը մեծ է նաև համայնքում սպորտային խմբակներ ու տարբեր մարզաձևերի պարապմունքներ անցկացնելու համար, սակայն դեռևս չկան բավարար պայմաններ մարզական կյանքը համայնքում զարգացնելու համար:

2.1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ

Միջհամայնքային համագործակցությունը Հայկաձորում դեռևս չի հասել այն մակարդակի, որ հնարավոր լինի հարևան համայնքների հետ միասին միավորումներ կազմելով մշակել հարևան համայնքների համատեղ ռազմավարություններ և զարգացման հեռանկարային ծրագրեր, որոնք հնարավոր կլինի իրագործել ջանքերի մեկտեղման և առաջին հերթին ֆինանսական ռեսուրսների կենտրոնացման արդյունքում, սակայն մնում է փաստ այն հանգամանքը, որ այսօր Հայկաձորի նման փոքր համայնքները չունեն բավականաչափ ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի կարողանան պետության կողմից տրամադրվող չնչին դոտացիայի և սեփական եկամուտների հավաքագրման արդյունքում կուտակված միջոցների հաշվին իրականացնել ծրագրեր, որոնք համայնքում կապահովեն որոշակի դրական տեղաշարժ և խթան կհանդիսանան համայնքային կյանքի զարգացման համար:

Հանրապետության բյուջեից ևս հազվադեպ են ծրագրային հատկացումներ տեղի ունենում և նման համայնքների դեպքում մնում է հույս դնել միայն համայնքի

ղեկավարի ճարպկության և համայնքը զարգացնելու ուղղությամբ ցուցաբերված շահագրգռվածության վրա, որպեսզի վերջինս կարողանա ամենատարբեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մեջ մտնելով, հնարավորինս մեծ քանակությամբ ներդրումներ բերի համայնք և դրանք ուղղի համայնքի համար առաջնային կարևորություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը:

Վերջին տարիներին Հայկաձորում կատարված ամենամեծ չափի ներդրումային ծրագիրը դա եղել է ՀՀ կառավարության աշխատակազմի <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի կողմից ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի և <<Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ>>-ի աջակցությամբ <<Գյուղական կարողությունների ստեղծում>> վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացնել ջրամատակարարման ենթածրագիր, որի արժեքը կազմում է 158 մլն դրամ, որից համանյքը սահմանված ժակետում պետք է կատարի գումարի 10 տոկոսի չափով համաֆինանսավորում: Այսինքն մինչ ծրագրի ամբողջական ավարտը համայնքային բյուջեից պետք է կատարվի շուրջ 16 մլն դրամի չափով համաֆինանսավորում: Ծրագիրն այժմ ընթացքի մեջ է և հույս ունենք, որ հնարավոր ֆինանսական միջոցների առկայության դեպքում մոտ ապագայում համայնքի բնակչությունը ապահովված կլինի և խմելու, և ոռոգման ջրով:

2.1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է սեփական եկամուտների հավաքագրումից, այն է՝ հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրք, վարձակալությամբ տրված համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներ:

Վերջին մի հինգ տարիների ընթացքում Հայկաձորի համայնքում սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 70-80 տոկոսի սահմաններում, սակայն

տեղական իշխանությունների կողմից ձեռք են առնվում միջոցներ տարեցտարի եկամուտների հավաքագրման էլ ավելի բարձր ցուցանիշ արձանագրելու ուղղությամբ:

Բյուջեի մուտքերի գերակշիռ մասը ուղղվում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի վճարմանը, տոն օրերին համայնքում կազմակերպվող միջոցառումների անցկացմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը, համայնքի՝ սոցիալապես անապահով բնակիչներին դրամանակ օգնությունների տրամադրմանը:

Ինչպես վերը նշել ենք համայնքի ֆինանսական փոքր հնարավորությունները թույլ չեն տալիս լուծել համայնքի զարգացմանը խոչընդոտող գլոբալ հարցեր ու հիմնախնդիրներ և նման հիմնախնդիրների լուծումը շատ ժամանակ համալիր մոտեցում է պահանջում՝ պետական իշնություն-համայնք-միջազգային դոնոր կազմակերպություններ շղթայում, որոնք համատեղ աշխատանքի և նպատակամղվածության արդյունքում կարող են հասնել ցանկալի արդյունքի և ունենալ զարգացած համայնք:

Այս պահին իրականացվող ջրամատակարարման ենթածրագրից բացի, համայնքը պատրաստակամ է ունեցած ֆինանսական ռեսուրսների և հնարավորությունների սահմաններում համաֆինանսավորում կատարել նաև այնպիսի ներդրումային ծրագրերում, որոնք կաշխուժացնեն համայնքային կյանքը, կբերեն աշխատատեղերի թվի ավելացման, գործազրկության մակարդակի նվազման և համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացման:

Նշենք, որ համայնքում կան տարբեր կառույցների ու կազմակերպությունների հետ համագործակցության բարի ավանդույթներ:

Համայնքը անդամակցում է <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը, սերտ գործընկերային հարաբերություններ ունի <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>>, <<Հայաստան համահայկական հիմնադրամի>>, <<Սոցիալական ներդրումների հիմնադրամի>>, գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի>>, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ներդրումային այլ կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Հայկաձոր համայնքի 2017 թվականի բյուջեի եկամուտները

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** (տող 1100 + տող 1200+տող 1300)		**13 484,9**	**13 484,9**	
1100	այդ թվում՝ **1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160)	**7100**	**6 100,8**	**6 100,8**	**X**
1110	այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112)	**7131**	**4 100,4**	**4 100,4**	**X**
1111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		10,4	10,4	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		4 090,0	4 090,0	X
1120	**1.2 Գույքային հարկեր այլ գույքից**	**7136**	**1 978,4**	**1 978,4**	**X**
1121	այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար		1 978,4	1 978,4	X
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**	**7145**	**22,0**	**22,0**	**X**

1131	այդ թվում՝ Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+տող 1146+տող 1147+տող 1148+տող 1149+տող 1150)	7145	22,0	22,0	X
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260)	**7300**	**5 651,5**	**5 651,5**	
1250	**2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից** (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258)	**7331**	**5 651,5**	**5 651,5**	**X**
1251	որից՝ ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		5 651,5	5 651,5	X
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390)	**7400**	**1 732,6**	**1 732,6**	
1330	**3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ** (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334)	**7415**	**1 728,6**	**1 728,6**	**X**

1331	այդ թվում՝ Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		1 728,6	1 728,6	X
1350	**3.5 Վարչական գանձումներ** (տող 1351 + տող 1352)	**7422**	**4,0**	**4,0**	**X**
1351	այդ թվում՝ Տեղական վճարներ		4,0	4,0	X

Մարզին բնորոշ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /կարկտահարություն, երաշտ, ցրտահարություն/ պատճառով կուտակվել են սեփական եկամուտների հավաքագրման գծով բավականին մեծ չափերի հասնող ապառքներ՝ պայմանավորված ոչ միայն սուբյեկտիվ գործոնով: Այսպես, օրինակ հողի հարկի ապառքների 35 տոկոսը անհուսալի են և պատկանում են այն մարդկանց, ովքեր 10 և ավելի տարիներ ընտանիքներով բացակայում են հանրապետությունից, իսկ նրանց հողերը կամ չեն մշակվում կամ էլ առանց համապատասխան պայմանագրերի ու պետական գրանցման, օգտագործվում են այլ անձանց կողմից: Տեղական ինքնակառավարման մարմինները չունեն համապատասխան լծակներ՝ ազդելու այդ անձանց վրա, ինչի շնորհիվ էլ կուտակկվում են մեծ չափերի հասնող ապառքներ: Անհրաժեշտ է բացը լրացնելու համար երկրի օրենսդիր մարմինը առաջարկությամբ հանդես գա և փորձի նման դեպքերի համար օրենսդրական խելամիտ լուծումներ առաջարկել:

Հայկաձոր համայնքի 2017 թվականի բյուջեի գործառնական ծախսեր

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100)	13 484,9	13 484,9	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180)	10 690,0	10 690,0	
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	10 240,0	10 240,0	
Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	10 240,0	10,240,0	
Ընդհանուր բնույթի ծառայություններ	300,0	300,0	
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	300,0	300,0	
Սոցիալական պաշտպանություն	700,0	700,0	
Տնտեսական հարաբերություններ	100,0	100,0	
Գյուղատնտեսություն	100,0	100,0	
Ջրամատակարարում	1130,0	1130,0	
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	150,0	150,0	
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	864,9	864,9	
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	150,0	150,0	

2.1.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ և պետք է յուրաքանչյուր համայնքի դեպքում ամենայն մանրամսնությամբ ուսումնասիրել և կատարել համարժեք եզրահանգումներ, թե տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմաը ինչ խոչընդոտներ կարող են հանդես գալ:

Մասնավորապես Հայկաձորի համայնքի համար, որպես առաջին և մեծ խոչընդոտ պետք է առանձնացնել ոռոգման համակարգի բացակայությունը, ինչը մեծ դժվարությունների առաջ է կանգնեցնում հայկաձորցուն գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու հարցում: Բնակավայրի հարևանությամբ է գտնվում Ախուրյան գետը և Ախուրյանի ջրամբարը: Համապատասխան համակարգի կառուցման դեպքում առկա հսկայաձավալ ջրային պաշարները կարող են օգտագործվել համայնքի ոռոգման կարիքների համար:

Սակայն խմելու ջրի ներքին ցանցը, որի երկարությունը շուրջ 12կմ է, ևս բարվոք վիճակում չէ, կառուցվել 1960-1970-ական թվականներին և քայքայված է շուրջ 70 տոկոսը:

Հաջորդ կարևոր հանգամանքը, որը ցանկանում ենք նշել որպես խոչընդոտ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար, դա ճանապարհների անբարեկարգ վիճակն է: Այսպես, օրինակ անբարեկարգ և քայքայված վիճակում են գտնվում ինչպես Գյումրի-Արմավիր-Հայկաձոր 4կմ երկարություն ունեցող միջհամայնքային ճանապարհը, այնպես էլ շուրջ 8կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների առանձին հատվածների անանցանելիության պատճառով շատ հաճախ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար: Տրանսպորտի և բեռնափոխադրումների հետ անմիջական կապ ունի նաև Բագրավանի երկաթուղային կայարանի փակումը, որը ևս իր բացասական ազդեցությունն է ունեցել համայնքի բնակիչների՝ դեպի Արմավիր և Երևան տեղափոխվելու հարցում:

2.1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերը

- Բերրի վարելահողերի առկայություն
- Տուֆ քարի, հանքակոպճի, շինարարական ավազի և կավի առկայություն
- Ախուրյան գետի և Ախուրյանի ջրամբարին մոտ գտնվելը
- Գյումրի-Արմավիր ճանապարհին մոտ գտնվելը
- Արտեզյան ջրերի մեծ պաշարներ ունենալը
- Պատմամշակութային արժեքների առկայություն
- Հարևանություն պատմական Անի մայրաքաղաքի հետ

Համայնքի թույլ կողմերն են

- Ոռոգելի վարելահողերի բացակայությունը
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները
- Համայնքի բնակչության ցածր կենսամակարդակը
- Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը
- Մշակույթի տան, մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և հանգստի գոտու բացակայությունը
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից
- Համայնքային բյուջեի սահմանափակ լինելը

Համայնքի հնարավորությունները

- Համայնքում առկա պատմամշակութային արժեքների և տարածքից տեսանելի պատմական Անի մայրաքաղաքի ավերակների բազայի վրա տուրիզմի զարգացում

- Ոռոգման համակարգի ներդրումով օգտագործել Ախուրյանի ջրամբարի ջուրը և զարկ տալ գյուղատնտեսության զարգացմանն ու անասնագլխաքանակի ավելացմանը
- Տուֆ քարի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում:

Համայնքին սպառնացող վտանգները

- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից, ինչը կարող է համայնքի նոսրացման և ծերացման լուրջ վտանգ հանդիսանալ
- Կոյուղաջրերի հեռացման համակարգի բացակայությունը, ինչի պատճառով հնարավոր է համայնքում բազմաթիվ վարակիչ հիվանդությունների տարածումը
- ՕԿՋ-ի բացակայությունը և խմելու ջրի աղտոտումները, որոնք ևս կարող են սուր աղիքային վարակների պատճառ հանդիսանալ
- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Բերրի վարելահողերի առկայություն ➢ Տուֆ քարի, հանքակոպճի, շինարարական ավազի և կավի առկայություն ➢ Ախուրյան գետի և Ախուրյանի ջրամբարին մոտ գտնվելը ➢ Գյումրի-Արմավիր ճանապարհին մոտ գտնվելը ➢ Արտեզյան ջրերի մեծ պաշարներ ունենալը ➢ Պատմամշակութային արժեքներ առկայություն ➢ Հարևանություն պատմական Անի մայրաքաղաքի հետ	❖ Ոռոգելի վարելահողերի բացակայությունը ❖ Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները ❖ Համայնքի բնակչության ցածր կենսամակարդակը ❖ Գյուղատնտեսական տեղնիկայի մաշվածությունը ❖ Մշակույթի տան, մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և հանգստի գոտու բացակայությունը ❖ Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը ❖ Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից

Հնարավորություններ	Սպառնալիքներ
➢ Համայնքում առկա պատմամշակութային արժեքների և տարածքից տեսանելի պատմական Անի մայրաքաղաքի ավերակների բազայի վրա տուրիզմի զարգացում ➢ Ոռոգման համակարգի ներդրումով օգտագործել Ախուրյանի ջրամբարի ջուրը և զարկ տալ գյուղատնտեսության զարգացմանն ու անասնագլխաքանակի ավելացմանը ➢ Տուֆ քարի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում:	❖ Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից, ինչը կարող է համայնքի բնակչության ծերացման լուրջ վտանգ հանդիսանալ ❖ Կոյուղաջրերի հեռացման համակարգի բացակայությունը, ինչի պատճառով հնարավոր է համայնքում բազմաթիվ վարակիչ հիվանդությունների տարածումը ❖ ՕԿՋ-ի բացակայությունը և խմելու ջրի աղտոտումները, որոնք ևս կարող են սուր աղիքային վարակների պատճառ հանդիսանալ ❖ Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը ❖ Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները

2.2. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

2.2.1. Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում

Համայնքի զարգացման ծրագրերի իրականացման արդյունքում ուրվագծվող տեսլականն է՝ կյանքի նոր որակ ունեցող, հյուրերի և զբոսաշրջիկների համար առավել գրավիչ, զարգացած գյուղատնտեսություն ունեցող համայնք: Դրան հասնելու համար նախևառաջ անհրաժեշտ է կարևորել համայնքու առկա մարդկային կապիտալը, այն համարել որպես բացարձակ արժեք, ով կարող է ինքնուրույն մտածելակերպ ցուցաբերելով հասնել սեփական համայնքի զարգացմանն ու դերի բարձրացմանը: Հրամայական է, որ տարեցտարի բարելավվի համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություն:

Կարողանալ լինել այնքան ճկուն կառավարիչ, որ շահագրգռող առաջարկներով համայնքը իրնց ուշադրության կենտրոն դարձնեն միջազգային դոնոր կազմակերպությունները, ամենատարբեր բարեգործական հաստատություններն ու հիմնադրամները, քանի որ Հայկաձորի նման փոքր համայնքի զարգացումը կարելի է տեսնել միայն եռակողմ բաց վեկտորի միջոցով, այն է՝ համայնք-պետություն-միջազգային կազմակերպություն: Բաց վեկտոր, քանի որ առաջին երկու հատվածը միշտ նույնն են (համայնք, պետություն), իսկ երրորդը միշտ կարող է փոխվել, կամ կարող են նորերը ավելանալ:

Ի վերջո բոլոր առաջադրված նպատակների լուծումը կամ իրագործումը հանգեցնելու են բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը:

Բարեկարգ, ասֆալտապատ և լուսավոր ներհամայնքային փողոցներ: Հայկաձոր համայնքի ռազմավարական զարգացման հեռահար պատկերն է ապահովել համայնքի կայուն զարգացումը առաջիկա տարիների ընդացքում: ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծության արդյունքում արտացոլվել է համայնքում առկա իրավիճակի, պոտենցիալի հնարավորությունները: Հայկաձոր համայնքի զարգացման ծրագրի տեսլականը հետևյալն է՝

1. Զարգացնել գյուղատնտեսությունը
2. Ստեղծել նոր որակի համայնք, որն ունի բրենդ և գրավչություն
3. Զարգացնել զբոսաշրջությունը

2.2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում

Համայնքի զարգացման տեսլականը մեզ համար բացահայտելուց հետո, պետք է մատնանշենք այն ուղիներն ու միջոցները, որոնց միջոցով կկարողանանք հասնել տեսլականի իրագործմաը:

1. ***Զարգացնել գյուղատնտեսությունը:*** Եվ այսպես, քանի որ Հայկաձոր համայնքը համարվում է գյուղական համայնք, և ինչ-որ չափով պետք է համայնքում տարածված լինեն գյուղատնտեսության ինչ-ինչ ճյուղեր, ուստի դրա համար էլ անհրաժեշտ են պայմանների ստեղծում:

Քանի որ համայնքը ունի ոչ բարենպաստ բնակլիմայական պայմաններ, ուստի հողագործությունը այքան էլ խրախուսելի չէ, քանի որ հաճախակի են երաշտներն ու կարկտահարությունը: Այդ իսկ պատճառով առավել նպատակահարմար է համայնքում զբաղվել անասնապահությամբ, սակայն այստեղ ևս ունենք շատ մեծ խոչընդոտ:

Անասունների խմոցների բացակայությամբ պայմանավորված՝ անասունների առկա չնչին գլխաքանակը անցնում է 15-20 կմ ջուր խմելու համար: Ուստի գյուղատնտեսության զարգացման համար որպես առաջնային և կարևոր անմիջական նպատակ պետք է առանձնացնել խմոցների կառուցումը և տեղադրումը:

Ի հաշիվ կառուցվող խմոցների, կենդանիների անցած ճանապարհը կրճատելու արդյունքում կարելի է հասնել նաև խոշոր եղջերավոր անասունների մթերատվության բարձրացմանը: Բացի դրանից անասնապահության համար նման նպաստավոր պայմանների ստեղծումը կնպաստի անասնագլխաքանակի ավելացմանը և նոր ու բարձր կաթնատվությամբ ու մսատվությամբ ցեղատեսակների ներկրմանը և բազմացմանը:

Գյուղատնտեսության զարգացման համար որպես անմիջական նպատակ կարելի է առանձնացնել նաև դաշտամիջյան ճանապարհների հարթեցումը, ինչ կդյուրացնի

գյուղտեխնիկայի շարժը և առավել նպաստավոր պայմաններ կստեղծի խոպան հողատարածքների մշակման համար:

2. ***Ստեղծել նոր որակի համայնք, որն ունի բրենդ և գրավչություն:*** Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայկաձոր համայնքը գտնվում է պատմական Անի մայրաքաղաքի հարևանությամբ, դա կարող է մեծ խթան հանդիսանալ համայնքին նոր ճանաչում բերելու հարցում: Սակայն պետք է կարողանալ մեր ինֆորմացիոն դարաշրջանում ճիշտ օգտագործել ունեցածն ու ճիշտ ձևով տարածել գրագետ տեղեկատվություն համայնքի մասին՝ համայնքը ճանաչելի դարձնելու համար: Ժամանակի խնդիր է ընդամենը Հայկաձոր համայնքի բրենդը մշակելն ու նախ հային ու Հայաստանին, ապա նաև օտարերկրացուն ներկայացնելը և համայնքը իր առավելություններով ի ցույց դնելը: Բրենդի ստեղծումից հետո արդեն կարելի է հստակ նախանշված քայլերով գնալ դեպի զբաստաշրջության զարգացում:
3. ***Զբաստաշրջության զարգացում:*** Ստեղծելով համայնքի բրենդը և համայնքը ճանաչելի դարձնելուց հետո պետք է ստեղծել անհրաժեշտ պայմաններ զբոսաշրջության զարգացմանը զարկ տալու համար: Այստեղ անմիջական նպատակների շղթան կարելի է շատ երկար ձգել, քանի որ յուրաքանչյուր աննշան հարցն անգամ շատ մեծ դրական կամ բացասական ազդեցություն կարող է ունենալ զբոսաշրջության հետ կապված հարցերի վրա:

Առաջին հերթին պետք է ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակը: Համայնքում շաբաթօրյակների և ծառատունկերի հաճախակի կազմակերպման միջոցով ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը: Սոցիալական ցանցերով, սեփական բլոկներով, ԶԼՄ-ներով պատմամշակույթային և բնական հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության տարածման, ինչպես նաև Հայկաձոր համայնքի ճանաչելիության բարձրացման նպատակով խթանել զբոսաշրջության զարգացումը: Իսկ Հայկաձոր համայնքում պատմամշակութային պակաս ամենևին էլ չկա« եթե եղածներին էլ ավելացնում ենք Անիի հուշարձանները, որոնք հառնում են Հայկաձոր այցելողի առաջ պատմական հրաշքի նման:

Այդ նուն նպատակի համար ոչ պակաս կարևոր է մշակութային կյանքի ակտիվացումը: Մեծ կարևորություն ունի նաև համայնքի ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«**Ոռոգման համակարգի անցկացում**»

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Համայնքի գյուղ. նշանակության հողերի ապահովում ոռոգման ջրով և ապահովագրում երաշտներից</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="6">Ապահովել վարելահողերի բարձր բերքատվություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>առկա չէ</td><td>առկա չէ</td><td>առկա չէ</td><td>առկա է</td><td></td></tr>
<tr><td rowspan="7">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1. Ոռոգման հուսալի համակարգի անցկացում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ.</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>100%</td><td></td></tr>
<tr><td colspan="6">2. Համայնքի ամբողջ բնակչությանը բավարարող ոռոգման ջուր</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>առկա է</td><td>առկա է</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում.
1.2.Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսական ներդրում.

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Համայնքի բյուջեյի սեփական ներդրումների ապահովում.
2.2.Ամբողջ համայնքի համար անցկացված ոռոգման համակարգի առկայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝10.000.000
Կապիտալ ծախսեր՝240.000.000
Ընդհանուր բյուջեն՝250.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6">Դոնոր կազմակերպություններ և պետբյուջե</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">Ֆինանսական միջոցների բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">2017-2020թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Ոռոգման համակարգի անցկացումը հնարավորություն կտա համայնքում ապահովել հացահատիկային մշակաբույսերի բարձր բերքատվություն, վարելահողերը պաշտպանված կլինեն երաշտներից, և ի վերջո կունենանք մի իրավիճակ, որ համայնքում չեն մնա խոպան հողեր և բերքատվության բարձր մակարդակն էլ կհանգեցնի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և կունենանք տեղում ինքնազբաղված բնակչություն:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Զբոսաշրջություն»

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի պատմամշակույթային նոր հուշարձանների հայտնաբերում</td></tr>
<tr><td rowspan="5">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ապահովել հուշարձանների ցուցանակների տեղադրում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td></tr>
<tr><td rowspan="9">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Ցուցանակներում նշված հուշարձաններ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td></tr>
<tr><td colspan="7">2. Զբոսաշրջիկների այց նոր ցուցանակներով պատմամշակույթային վայրեր</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Համայնքի բրենդի ստեղծում
1.2. Ցուցանակների պատրաստում
1.3.Էլեկտրոնային բլոկների ստեղծում, համացանցում հուշարձանների անձնագրերի տեղադրում

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1. Համայնքը դառնում է ճանաչելի և գրավիչ, սկսում է գիտակցվել որպես Անիին կապող ամենալավ դարպաս
2.2. Զբոսաշրջիկները այցելում են պատմամշակույթային վայրեր ու հուշարձաններ
2.3. Համայնքաբնակները ստանում են եկամուտներ զբոսաշրջությունից
2.4. Երիտասարդները մնում են համայնքում որպես որակյալ և բարձր վարձատրվող աշխատուժ</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝1.000.000
Կապիտալ ծախսեր՝6.000.000
Ընդհանուր բյուջեն՝ 7.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">ՀՀ տուրիզմի ոլորտի մասնագետներ, միջազգային դոնոր կազմակերպություններ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Ֆինանսական միջոցների բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Տեղացի և արտասահմանցի զբոսաշրջիկներ, համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքում զբոսաշրջության զարգացում ենք փորձելու իրականացնել ի հաշիվ տեղական ռեսուրսների: Ֆինանսական ռեսուրսների առկայությունը այս հարցում երկրորդվում է մարդկային կապիտալին, որի մեծ ցանկության դեպքում կարճ ժամանակում հնարավոր կդառնա համայնքը տեղացի և արտասահմանցի տուրիստի համար գրավիչ դարձնել: Զբոսաշրջության զարգացմանը զուգահեռ կակտիվանա կյանքը համայքում, կավելանա համայնքաբնակների եկամուտները տնտեսական ակտիվության հաշվին, կմոռացվի, որ ինչ որ ժամանակ արտագնա աշխատանքի մեկնողներ են եղել համայնքից:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«**Համայնքի դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում**»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի խոտհունձի աշխատանքների կազմակերպում, խոտով բարձված մեքենաների անվթար տեղաշարժ, տեխնիկայի արդյունավետ և անխափան տեղափոխում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ապահովել ճանապարհային ենթակառուցվածքների պահպանությունն ու շահագործումը						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
	2. Փոսալցված և նոր կառուցված ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Հարթեցված և բարեկարգ դաշտամիջյան ճանապարհներ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Հողօգտագործողները գնում են հեռագնա արոտներ բարեկարգված դաշտամիջյան ճանապարհներով 2.2. Ապահովվում է գյուղտեխնիկայի անվտանգ և ապահով տեղաշարժը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1000.000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 4.500.000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5.500.000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բանվորական ուժ, շինարարական տեխնիկա, ֆինանսական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Սելաֆներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքաբնակներ, ֆերմերներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Դաշտամիջյան ճանապարհներին առաջացած փոսորակներն անանցանելի են դարձրել գյուղտեխնիկայի տեղափոխման համար: Նախատեսվում է հիմնական հարթեցման ու փոսալցման միջոցով բարեկարգել դաշտամիջյան ճանապարհները: Հարթեցումից և փոսալցումից հետո կբարելավվի անխափան երթևեկությունը դաշտամիջյան ճանապարհներով, կխնայվի մեծ քանակությամբ վառելանյութ և գյուղտեխնիկայի շահագործումը և օգտակար գործողության գործակիցը կերկարաձգվի մի քանի տարով:						

2.3. ՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի զարգացման ծրագրերը իրականացնելու նպատակով առաջին հերթին պետք է ապավինել սեփական միջոցներին: Համայնքը ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսում է համագործակցել ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների, բարերարների, միջազգային դոնոր կազմակերպությունների հետ: Ինչպես վերը նշել ենք, համայնքը անդամակցում է «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը, սերտ գործընկերային հարաբերություններ ունի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի», «Հայաստան համահայկական հիմնադրամի», «Սոցիալական ներդրումների հիմնադրամի», «Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի», ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ներդրումային այլ կազմակերպությունների ու հիմնադրամների հետ և մենք լիահույս ենք, որ առաջիկա հինգ տարիներին ևս ինտենսիվ շփումներն ու գործընկերային հարաբերությունները պահպանվելու են նշված կազմակերպությունների հետ և նրանց ֆինանսական աջակցության արդյունքում հնարավոր են դառնալու համայնքի համար կենսական նշանակություն ունեցող ծրագրերի իրականացումը:

3. ՀԶԾ մոնիթորինգ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները:

ՀԶԾ մոնիթորինգի համար անհրաժեշտ է մշակել մոնիթորինգի պլան, որը սահմանում է մոնիթորինգային ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, աղբյուրն ու մեթոդը: Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է

հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն պետք է ներկայացվի ամեն տարի, հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում:

ՀԶԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարվում են համատեղ: Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի հանրային բաց լսումներ և քննարկումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցերին:

ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազմման, քննարկման և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ վերաբերում են նաև ՀԶԾ-ի իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶԾ-ի վերահսկողությունն ապահովում է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու ձախողումներից, ժամանակին ու ճիշտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-երի ավելի հիմնավորված որոշումների կայացման համար:

4.ՀԶԾ իրականացումը

Համայնքի զարգացման ծրագրի իրականացման ընդհանուր պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Համայնքի ավագանու կողմից ՀԶԾ-ի ընդունումով հաստատվում են ՀԶԾ-ում ներառված բոլոր ոլորտային միջոցառումները՝ ըստ ժամկետների, ֆինանսավորման և կատարման պատասխանատուների: Այսինքն, ՀԶԾ-ի իրականացման կարևոր գործիքը հանդիսանում է բյուջետային կամ արտաբյուջետային ֆինանսավորմամբ ոլորտային միջոցառումը, որի իրականացման պատասխանատուն, որպես կանոն, համայնքի աշխատակազմի տվյալ ոլորտի ստորաբաժանման կամ

համայնքի ենթակայության կազմակերպության ղեկավարը կամ համակարգողն է՝ համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ:

Համայնքի ղեկավարը տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս հաշվի է առնում համայնքի բնակչության կենսական շահերը, ՀԶԾ-ն, ինչպես նաև առկա ռեսուրսները: Միաժամանակ, համայնքների բյուջեների ձևավորման հիմնական սկզբունքներից մեկը վերաբերում է հենց համայնքի ավագանու կողմից ընդունված ՀԶԾ-ի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորմանը: Սա նշանակում է, որ համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ծրագրերն են, որոնց իրականացման համար դրանց բյուջեներով կամ նախահաշիվներով հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը, ծառայությունները և միջոցառումները) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը, իսկ համայնքի բյուջետային գործընթացն ամբողջովին կանոնակարգված է ՀՀ բյուջետային օրենսդրությամբ:

5.ՀԶԾ գնահատում

ՀԶԾ իրականացումը պետք է գնահատվի: Գնահատումն ավարտված կամ իրականացվող ծրագրի իրականացման և արդյունքների պարբերական և օբյեկտիվ ուսումնասիրություն է:

Գնահատման համար տեղեկատվական բազան ապահովվում է մոնիթորինգի միջոցով:

Մոնիթորինգը տեղեկություններ է տրամադրում, թե ժամանակի տվյալ պահին ծրագիրը որտեղ է գտնվում՝ համեմատած թիրախների հետ: Գնահատումը կենտրոնանում է պատճառահետևանքային կապերի և արդյունքների վրա և, ի տարբերություն նկարագրական մոնիթորինգի, վերլուծական բնույթ ունի: Գնահատման միջոցով փորձ է արվում հասկանալ մոնիթորինգի միջոցով բացահայտված շեղումները, ուսումնասիրել ձախողման կամ հաջողության պատճառները, բացահայտել գրանցված

արդյունքների որ մասն է կարելի վերագրել ծրագրին, իսկ որ մասը՝ այլ գործոններին, ինչպես նաև ծրագրի իրականացման առավել արդյունավետ այլընտրանքային լուծումներ առաջարկել և հետագայում, սխալները չկրկնելու համար, դասեր քաղել:

6. Վերջաբան

Հայկաձոր համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը իրականացվելու է համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատակիցների, համայնքի բնակիչների մասնակցությամբ:

Համայնքի 2017-2021 թվականների համայնքի զարգացման ծրագիրը ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի (հատկապես՝ սեփական) փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀԶԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-երին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների, ՀՀ-ում (մասնավորապես՝ ՀՀ Շիրակի մարզում) գործող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների և գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ծրագրով պլանավորված ներդրումները և միջոցները:

Մենք լիահույս ենք, որ առաջիկա հինգ տարիները մեր կողմից մատնանշված հիմնախնդիրների և առաջարկված ծրագրերի լուծման և իրականացման գործում պետք է հաջողվեն և հինգ տարի անց ունենալու ենք զարգացած Հայկաձոր, որը շատ առումներով լինելու է գոնե հարևան համայնքներին շատ առումներով գերազանցող և միաժամանակ օրինակելի համայնք:

Ուրեմն ի գործ դեպի զարգացում, ի գործ դեպի նպատակների և ծրագրերի իրականացում: